

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ինչ որ ընես՝ թե՛ կ'ընես :

ԸՏԵՆՈՎ տէ՛վրիշ մը կայ եղեր որ սովորութիւն ըրեր է՝ անդադար աս խօսքս կը զրուցէ թէ Ինչ որ ընես՝ թե՛ կ'ընես . աս ըսելով դուն է դուռ ողորմութիւն կը մուրայ եղեր : () ր մըն ալ կ'երթայ մէկ դուռ մը կը զարնէ , «Տան տիկին , կ'ըսէ , ինչ որ ընես՝ քեզ կ'ընես . բան մը տուր որ ելլեմ երթամ , » . կինը կը հանէ կարկանդակ՝ մը կուտայ , տէ՛վրիշն ալ Ինչ որ ընես քեզ կ'ընես կ'ըսէ ու կ'առնու կ'երթայ . բայց կարկանդակին համն ալ բերանը մնալով՝ կը սկսի ամէն օր գալ նոյն խօսքերով բան մուրալ : Երբեք կինը կը ձանձրանայ տէ՛վրիշին ձեռքէն , բայց ինչ ընէ , անիկայ կարկանդակը չառած՝ երթալիք չունի . և որովհետեւ իր որդին ու երիկը պատերազմի գնացած են եղեր , անոնց ողջ առողջ դառնալուն համար ըլլայ ըսելով ամէն անգամ ողորմութիւնը կուտայ եղեր : Ա երջապէս ճարր կը հատնի , օր մը կարկանդակը շինած ատենը մէջը թոյն կը դնէ որ տէ՛վրիշը ուտէ մեռնի , ինքն ալ ձեռքէն ազատի : Արկորորդ օրը կը տնկուի տէ՛վրիշը , դուռը կը զարնէ , «Տանտիկին , կ'ըսէ , ինչ որ ընես՝ քեզ կ'ընես . քիչ մը բան տուր՝ ելլեմ երթամ , » . կինը կը հանէ կուտայ կարկանդակը . տէ՛վրիշն ալ կ'առնու կը դնէ սուպրակն ու կ'երթայ :

Տէ՛վրիշին բնակարանը քաղաքէն դուրս է եղեր . դէպ ՚ի հոն երթալու ատենը՝ պատերազմէն ետ դարձողներէն երկու ձիաւոր ասոր վրայ կը յարձրկին , «Տօպրակիդ մէջ ոսկի կայ ինչ կայ՝ տեսնենք , » կ'ըսեն . — Այ պարոններ , բան մը չկայ : — Այ , չըլլար , բաց նայինք , » : Ար բանայ , կը նային որ մէջէն կարկանդակ մը ելաւ , մէկէն կ'առնուն կ'ուտեն , ուրախութեամբ տուն կուգան : Այ կը մէկալը կ'ելլեն ասոնց աչքիլուսի կը վազեն . ասոնք ըսես նէ՛ քանի կ'երթան կը բռնկին ,

1 Պօղոս :

տակնու՛վրայ կ'ըլլան , մահուան դուռը կը հասնին : Ար հարցընեն եկողները թէ «Այ հիւանդութիւնը շատո՞նց է որ ունեցար : — Այ , կ'ըսեն , մենք հիւանդութեան երես տեսած չունինք . ողջ առողջ եկանք . միայն թէ քաղաք մօտեցած ատեննիս տէ՛վրիշի մը սուպրակը պարպեցինք , մէջէն կարկանդակ մը ելաւ , կերածնուս պէս՝ ասանկ եղանք , » կ'ըսեն ու կը մեռնին : Աինը ըսելուն պէս՝ ձեռուրները զլխուն զարնելով «Այն , աս ինչ ձուն էր որ ես իմ գլխուս բերի , » կ'ըսէր ու կուլար կ'ողբար , վասն զի գիտէր որ պատճառը իր եփած կարկանդակն է : Տէ՛վրիշը կուգայ երկրորդ օրը , կը հասկընայ եղածը , կը դառնայ կ'ըսէ կնիկանը . «Նա պա ես ամէն օր քեզի չէի ըսեր թէ ինչ որ ընես քեզ կ'ընես . նորէն կ'ըսեմ՝ քեզ կ'ընես , » :

ՆԿԱՐԱԳԻՐ

Նորոր Գորգ :

ՆՊԱՐՏՈՒԹԻՒՆ ըսելով հոս չենք իմանար եօթը մահուան մեղքերուն մէկը՝ որ ուղղակի Ըստուծոյ դէմ է , այն մեղքն որ հրեշտակները սատանայ ըրաւ , ու մարդս սատանայի արբանեակ կ'ընէ . անիկայ ինքիրեն յայտնի է ինչ գէշ ախտ ըլլալը : Այլ կ'իմանանք հոս այն անկարգ անձնասիրութիւնը որ ուրիշներէն աւելի իրաւունք մը իրեն կը սեփականէ , իբր թէ անոնցմէ վեր արարած մը ըլլար , ու իր պատիւը անկարգ կերպով կը փնտռէ : Այ ախտս ատելի կ'ընէ զմարդ՝ ուրիշներուն անձնասիրութեանը դայելով . ծիծաղելի ալ կ'ընէ՝ ցուցընելով իր քիչ խելք ունենալը : Այնթաղրենք մէկ հպարտ մարդ մը , որ կատարելութենէ զուրկ ալ չըլլայ . անկէ ատելի ու ծիծաղելի ինչ կրնայ ըլլալ : Այ որ ընկերութեան մէջ մտնէ , ետով կը սկսի խօսքը՝ ետով կը լմնցընէ . ես աղէկը գիտեմ , իմ ըսածս է , ինծի